# «Իզմիրլյան» հիմնադրամի ծրագրի ձեռքբերված առանցքային արդյունքները 2024 թվականին

«Իզմիրլյան» հիմնադրամի ռազմավարական նպատակն է նպաստել Հայաստանի կայուն զարգացմանը՝ իրականացնելով բազմաբնույթ նախաձեռնություններ կրթության, առողջապահության, տնտեսական զարգացման, սոցիալական բարեկեցության, նորարարության և հայկական մշակութային ժառանգության պահպանման ոլորտներում՝ ի կատարումն իր առաքելության՝ «նպաստել ազգի պահպանմանը»:

«Իզմիրլյան» հիմնադրամի իրականացրած ծրագրերը շահառուներին տրամադրում են բազմաթիվ կարճաժամկետ և երկարաժամկետ օգուտներ: Դրանց թվում են առողջության, գիտելիքների ու հմտությունների բարելավումը, առողջապահության կառավարման համակարգի կատարելագործումը, համայնքային ենթակառուցվածքը, որակյալ կրթության հասանելիությունը, խոցելի խմբերի և հատուկ կարիքներ ունեցող երեխաների աջակցությունը, գյուղատնտեսության զարգացումը, Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունները և այլն:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում գործունեության մեկնարկից ի վեր «Իզմիրլյան» հիմնադրամի իրականացրած ծրագրերից ուղղակիորեն օգտվել են մի քանի հարյուր հազար կարիքավոր անձինք: Միայն 2024 թվականին Հայաստանի մարզերում իրականացված ՀԻ 16 ծրագրերից ուղղակիորեն օգտվել է 5 676 անձ (թիրախի 166%-ը), անուղղակի շահառուները կազմել են շուրջ 22 704 մարդ: 2024 թվականին ՀԻ ֆինանսավորած ծրագրերի առանցքային արդյունքներն ու ձեռքբերումները կրթության, առողջապահության, սոցիալական բարեկեցության և այլ ոլորտներում ներառում են հետևյալը.

## Առողջապահության ոլորտ

- «Իզմիրլյան» հիմնադրամը «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի հետ համագործակցությամբ առողջապահական աջակցություն է տրամադրել 20 սիրիահայ, լիբանանահայ և իրաքահայ անձանց (կուտակային՝ 914՝ ծրագրի մեկնարկից ի վեր), ովքեր իրենց երկրներում ճգնաժամի պատճառով ապաստանել են Հայաստանում:
- 81 վիրավոր զինվոր և սպա (կուտակային՝ 500՝ ծրագրի մեկնարկից ի վեր) ստացել է անվճար բուժօգնություն:
- Բացի այդ, Արցախից տեղահանված 32 անձ (կուտակային՝ 381՝ ծրագրի մեկնարկից ի վեր) ստացել է անվճար բուժօգնություն:
- Խոցելի ընտանիքներից քաղցկեղ ախտորոշված չորս երեխա (կուտակային՝ 10՝ ծրագրի մեկնարկից ի վեր) ստացել է համապատասխան բուժում:
- ԻԲԿ-ում ներդրվել է առողջապահության էլեկտրոնային կառավարման համակարգ, և ԻԲԿ 148 աշխատակից վերապատրաստվել է ՏՀՏ գործիքների ու պրակտիկաների կիրառման ոլորտում:

## Կրթություն և նորարարություն

- Հայաստանի սահմանամերձ և հեռավոր համայնքների 769 աշակերտի կրթությունը բարելավվել է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի հետ համագործակցությամբ իրականացվող կրթական ծրագրերի միջոցով, աջակցություն է տրամադրվել նաև հինգ ուսուցիչ-առաջնորդի:

- Գյուղատնտեսության ոլորտում բարելավվել են 296 մասնագետի, շրջանավարտի և մասնավոր հատվածի ներկայացուցչի գիտելիքներն ու հմտությունները: ՄԿՈՒ օրենսդրական բարեփոխումների շրջանակում ավարտվել է քաղաքականությանն առնչվող վեց գիտելիքային արդյունք: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության, SDC-ի, ADC-ի, GIZ-ի, HEKS EPER-ի, SDA-ի, Vanand-ի և FH-ի հետ համագործակցությամբ:
- Աջակցություն հայերենի իմացության չափելի չափորոշիչների ստեղծմանը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Լեզվի կոմիտեի հետ համագործակցությամբ: Մշակվել է քաղաքականությանն առնչվող մեկ գիտելիքային արդյունք (A1–A2, B1–B2, C1–C2 մակարդակների չափորոշիչներ):
- Հեռավոր սահմանամերձ համայնքներից և Արցախից ութ տաղանդավոր ավագ դպրոցի աշակերտի համար ապահովվել է որակյալ կրթության հասանելիություն «Շիրակացու ճեմարանում»:
- Մասնագիտական կողմնորոշման, կարողությունների զարգացման (ներառյալ մասնագիտական ուսուցումը) և բիզնես պլանների մշակման միջոցով բարելավվել են 41 վիրավոր պատերազմի վետերանի գիտելիքները, հմտություններն ու զբաղվածության հնարավորությունները: Ծրագիրն իրականացվել է «Իմ քայլը» հիմնադրամի հետ համագործակցությամբ:

## Սոցիալական բարեկեցություն

- Ավելի քան 418 հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող երեխա օգտվել է ՀԻ փոքր դրամաշնորհային տարբեր նախաձեռնություններից՝ «Սորս» հիմնադրամի, «Արաբկիր» հիմնադրամի և «Քայլ առաջ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Նախաձեռնությունները բարելավել են օժանդակ և հարմարեցված կահույքի ու սարքերի հասանելիությունը, ընդլայնել աուտիզմ ունեցող երիտասարդների տնտեսական հնարավորություններն ու սոցիալական ներառումը, զարգացրել ինքնուրույն կյանքին աջակցող կենսական հմտություններ, բարելավել Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը բնակվող երեխաների կյանքի որակը և այլն:
- Ավելի քան 224 ծնող, ովքեր ունեն հաշմանդամություն ունեցող երեխաներ, օգտվել է օժանդակ և հարմարեցված կահույքի ու սարքերի կիրառման վերապատրաստումից՝ հնարավորություն ստանալով երեխայի խնամքն իրականացնել տանը:
- «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների աջակցություն» ծրագրի շրջանակում կառուցվել/վերականգնվել է երկու համայնքային փոքր խմբային տուն: Ծրագիրն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:
- Քաղաքականություն մշակողների հաստատմանն է ներկայացվել մեկ նոր օրենք («Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին վերանայված օրենքի նախագիծը, որը ներառում է N1744-Ն որոշման փոփոխությունները) և կառավարության մեկ որոշում (համայնքային փոքր խմբային տների ստանդարտ ներքին կանոնակարգի մասին):

## Համայնքային զարգացում

- Կառուցվել/արդիականացվել է խմելու ջրի համակարգ, որից ուղղակիորեն օգտվել է ընդհանուր առմամբ 1 374 անձ: Ծրագիրն իրականացվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան, Կայուն զարգացման քաղաքային հիմնադրամի և «Հայկական էներգետիկ գործակալություն» հիմնադրամի հետ համագործակցությամբ:

## Հայրենադարձություն և Հայաստան–Սփյուռք կապեր

- Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի տեխնիկական հագեցվածության բարելավում, որից օգտվել է ընդհանուր առմամբ 980 անձ: Ծրագիրն իրականացվել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցությամբ:
- Աջակցություն Երկրորդ համահայկական գագաթնաժողովին, որին մասնակցել է ավելի քան 1 000 մասնակից, այդ թվում՝ 800 ներկայացուցիչ Սփյուռքից:

---

*(Հայերեն թարգմանությունը՝ մեր կողմից: Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:)*